

ՄԵՆԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարեկանը 6 ռուբլ. Առանձին համարները 7 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ». կամ Tiflis, Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և տոն օրերէն).

Յայտարարութիւնը ընդունվում է ամեն լիզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.

ԲՈՎԱՆԳՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Բանկի դերակտոր և ուսուցիչ. Գործնական դիտելիքների բացակայութիւն. Ներքին լուրեր. — ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Հանապարհորդութիւն Ասիայում. Արտաքին լուրեր. — ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ. — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ԲՕՐՍԱ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Նամակներ թիւրքաց Հայաստանից.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԲԱՆԿԻ ԳԻՐԵԿՏՐ ԵՒ ՈՒՍՈՒՑԻՉ

Վրացիների կալուածական բանկի անդամները վերջին նիստի մէջ պատահած սկանդալը խօսակցութեան առարկայ է դարձել ամբողջ հասարակութեան բերանում: Ի՞նչ ասել կուզէ, որ պատուիրանները չեն կարող արդարացի վճարել մի հասարակութեան մէջ, որը միաբերան բարձրացնում և պաշտպանում է մի խնդրի և գաղտնի քուէարկութեան ժամանակ նոյն խնդիրը գլորում ու սկսում է... ինչպէս այդ պատահեց զիւրիշիլ հարցի հետ: Բայց այդ էլ դեռ ոչինչ, ամբողջ միշտ ամբողջ է, թէև նա բաղկացած լինի նոյն իսկ ժառանգական «թաւանդներից», բայց ինչ կասե՞ք, երբ այդ ամբողջի արած սխալը փառաբանելու համար, ի վարձատրութիւն հազար ռուբլի զիւրիշիլի, որն ամբողջ տալիս է մի ինտելիգենտ անուանած պարսին, վերջինս, այսինքն այդ պարսն ինտելիգենտը, ժողովրդի առաջ ամենա յանդուգն կերպով տոնատակ է տալիս և կոխկոտում ամբողջ գաղափարները, որոնցով նա տանտեսակ տարիներ պարծեցել է ժողովրդի առաջ. ինչ կասե՞ք այդ տեսակ վարմունքին: Մենք դրան ա-

նուն չենք գտնում: Կալուածատէրերի վերջին նիստի մէջ հարց դրվեց, որ այսուհետև զիւրիշիլը չը ստանան բանկի վարչութեան անդամները, այլ այդ զիւրիշիլը գործածվի բարեգործական նպատակով: Գրեթէ ամբողջ ժողովը համաձայն էր այդ առաջարկութեան և պահանջում էր խնդիրը չը քուէարկել, այլ վճարել միաձայն: Բանկի վարչութեան անդամ իշխան Մաչաբելի «(Իրօէթա)» լրագրի նախկին խմբագիրը երկար ու բարակ սկսեց բացատրել զիւրիշիլի անհրաժեշտութիւնը իր և իր ընկերների գրպանի համար, ժողովականներից մէկը իշխան Չեղքեզով նկարագրելով վրաց միակ դարձրից ցաւալի գրութիւնը գտնում էր ուրիշների հետ միասին, որ աւելի լաւ է այդ զիւրիշիլը յատկացնեն ուսումնարանական գործին: Մի և նոյն ժամանակ յարգելի իշխանը համամտութեամբ էր ուսուցչի աշխատանքը բանկի դերակտորի աշխատանքի հետ, ասելով որ ուսուցչին իր տաժանակիւր աշխատանքի համար վարձատրութիւն տրամադրվում է 30—40 ռուբլի, աւելի իրաւունք ունի վարձատրութիւն և զիւրիշիլը պահանջելու, քան թէ ուրիշները, «իսկ բանկի դերակտորները, որոնք հազարներ են ստանում և այստեղ պարծենալով իրանց օգտակարութեամբ, ասում են թէ իրանք աշխատում են բանկի օգտին համար,— դրա մէջ զարմանալի ոչինչ բան չը կայ, այդ աշխատութեան համար նրանք լաւ ունիկ են ստանում»: Որքան մենք յիշում ենք, իշխան Չեղքեզով այս բառական ճշմարտ խօսքերն ասեց հանգարտ կերպով, ոչ զիւրիշ չը վիրաւորելով իրան յատուկ համեստութեամբ և ամբողջ ժողովը նրան համակրեց. բայց հետեւեալ օրը իշխան Մաչաբելի, իրան վիրաւորված զգալով (երբ իշխանին ամբողջ օր է հարկաւոր վիրաւորանքը բացատրելու համար) թող տուեց իրան ամենա-

կողմի կերպով ամբողջ ժողովի առջև վիրաւորել իշխան Չեղքեզովին, կասկած չալանելով նրա անուղիչեան վրա միայն այն պատճառով, որ նա յանդուգնութիւն է ունեցել ուսուցչի աշխատանքը համեմատել հետ միատեսիլ հետ: Այո, ի հարկէ, ձեր պոյնտաւալաւորութիւն Մաչաբելի, ինչպէս կարելի է համեմատել ուսուցչի աշխատանքը ձեր հետ: Ձեր մօմակալները մինչև անգամ էլեք արիւր են և պէտք է բոլորի տալ այն ուսուցչին, որը դուք ճշգրտել մոմ էլ չունենալով՝ ձեզ գրել կարգալ է սովորեցրել, որ դուք ձեր խօսքն ու գրելն այսօր նուրիշէ մամոնային...

Իշխան Մաչաբելիի այս վերին աստիճանի պախարակելի վարմունքը ահագին չիֆթութիւն դարձեցրեց ժողովի մէջ. հարցը քիչ էր մնում վճարել արեւել, բայց յարգելի իշխան Չեղքեզով հեռացաւ ժողովից, խառնակութիւնների պատճառ չը տալու համար: Մաչաբելի տեսնելով ընդհանուր գործուժը, ներսին խնդրեց ժողովից իր անմիտ վարմունքի համար, որովհետև այդպիսի ներդրութիւնը նրան չէ զրկում զիւրիշիլի իրաւունքից:

Ս. Հ.

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԳԻՏԵԼԻԲԵՐԻ ԲԱՅԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Մօակայում գոյութիւն ունի «Կրթված կանանց մէջ գործնական գիտելիքներ տարածող ընկերութիւն» (общество распространения между образованными женщинами практических знаний).

Ի՞նչ է այդ ընկերութեան նպատակը: Մեր օրերէն գիմնազիաների պրոգրամայում մի պակասութիւն կայ, այդ պակասութիւնն է գործնական գիտելիքների բացակայութիւնը: Նոյն պակասութիւնը կայ և տղայաց ուսումնարաններ-

ում, բայց այնպէս զգալի չէ և աչքի չէ ընկնում, որովհետև ուսումնարանում աւարտող երիտասարդը շարունակելով ուսումը մի օր և է բարձրագոյն ուսումնարանում, ձեռք է բերում այնտեղ գործնական գիտելիքներ՝ աշխատանքի միջոց, մինչդեռ օրերովը հէց գիմնազիան աւարտելուց կեանքի մէջ մտնելով՝ ձեռքում ամենևին զէնք չունի, չեմ ասում ապրուստ հայթայթելու համար, այլ մօրն օգնական լինելու, բացի դաշնամուրի վրա անկողաց, պար դալուց և բօմաներ կարգաւուց: Եւ եթէ մենք տեսնում ենք, որ կանանց կրթական գործը չէ պատուաստվում ամբողջին դա նրանից է որ նա (ամբողջ) չէ տեսնում կանանց կրթութեան շօշափելի օգուտը: Յիրաւի 9—10 տարեկանից սկսած մինչև 16—17 տարեկանը օրերովը անց է կացնում կեանքը ուսումնարանում, դասեր սովորում և ամենևին ժամանակ չէ ունենում թէ հետեւ իրանց տան անտեսութեան և թէ խառնվել այդ գործերում: Գրա հետեւանք այն է լինում, որ տանտիկին դառած օրերովը չէ կարողանում եկամուտին համապատասխան կեանք վարել և ոչ էլ հարկաւոր եկած տեղը սեփական օյժերով ապրուստ հայթայթել:

Ի՞նչ է գիմնազիայում աւարտած օրերովը. կարող է արդեօք նա, եթէ այսօր վաղը տանտիկին դառնալու լինի—ասում եմ կարող է կառավարել այն տունը—տնարարութիւն անել, եթէ մայր դառնայ, երեխայի մասին հոգ տանի, նրա համար չոր կարի, թէ պէտք է միշտ ուրիշ—մանագէտի օգնութեան դիմի: Հաւատացած եմ, որ ամենքը կը պատասխանեն թէ, «չէ, չէ կարող»:

Շատ շատ եթէ գիմնազիայում աւարտած օրերովը կարողանում է մի բան անել, այդ՝ կարելն է և միայն կարել, իսկ ձեռք—Աստուած գիտէ, խօսքս անհրաժեշտ պիտոյնների մասին է և ոչ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱՄԱԿՆԵՐ ԹԻՒՐԳՈՒՅ ՀԱՅԱՍՏԱՆԻՅ

XIX *)

188.... Թուով. 30 վառ.

Բարեկամ.

Այս նամակովս ես կը գրեմ քեզ Վասպուրականի հայ գիւղացիների ձմեռնային դարձմունքների մասին, կամ, ինչպէս ասում են, տնայնագործութեան մասին,—գրադմունքներ, որոնք դուրս են իրանց սովորական դարձմունքներից:

Մեզ մօտ, ինչպէս գիտես, հայ գիւղացին զրբկանք է կրում ամեն տեսակ անպաշտօն և պաշտօնական անձերից, ամեն մի շուտ իր վրա խորտաացող աղայից, կամ նշանադրեստից և կամ շատ անգամ լոկ աղմուկ հանող և մի հրացանով պարծեցող քրդից: Հայ գիւղացին այնչափ ձանձրացել է իր քրդերից ձրիապէս ուրիշին տալուց, որ եթէ ձար ունենար, յետ կը կենար իր սովորական դարձմունքներից անգամ:

Հէց այդ գրութիւնը և դրանից աղատվելու անկարողութիւնը ստիպել է հայ գիւղացուն աշխատել միայն այնքան, որ լրացնէ իր և իրայինների կոկորդիլ— փորի պահանջները. ստիպել է չաշխատել դուրս գալու իր տնտեսական նեղ դրութիւնից, որպէս զի հարուստ կամ հարստացող չը կարծիք և անդադար կողոպտվելու և անպատուութիւնների չենթարկվի:

Այս պատճառով նա աւելի լաւ է համարում ձմեռը անցկացնել մեծ մասամբ պարապ ժողովել և անտեսել մէջ, խօսել, ժողովրդական միշտ արտասուածքը երգել երգել, լսել փողի տիւրքերաժողովիւն, արտասուել դառնապէս, պատմել իր ցաւերը և կամ լսել քահանայից, գիտնողի և վարժապետին:

*) Նախորդ նամակի ձակատին սխալմամբ տըպագրված էր XIII, փոխանակ XVIII-ի:

Երեք տեսակ անձնիք, որոնք միմեանց օգնում են ժողովուրդը պահելու միշտ նախապաշարված, միշտ անտիպաշար, միշտ վախկոտ և միշտ արտասուող ու միմիայն աղօթող...

Որովհետև գիտնող իր գիտութիւնը ցոյց տալու համար՝ արհամարհում է չըջպատուող կեանքը. պատմում է դեւերի, արալեգների, վնուկների պատմութիւններ, կախարդական աշխարհների մասին... հաւատացնում է, որ ինքը տեսել է դրանց, գտնվել է նրանց թոնիրների կամ աւերակների մէջ կազմած ինքնուրուրում... ունեցել է հիւրի-փէրի սիրահիւներ... և համոզում է, որ այդ բոլորին կարող է հասնել ամեն մարդ, միմիայն պիտի անդադար աղօթել, ծով պահել, ապաշխարել... Քահանան խօսք է աւանում, ըսկում է գիտութիւն խօսքերը հաստատելու համար պատմել երեակայական սուրբերի պատմութիւնները, նրանց ծննդապատմութիւնը, ճգնութիւնները, գործած հրաշքերը, կրած փորձութիւնները քաջութեամբ դիմանալը... մնալ է կարմուշը, կարել կարող... և հաւատացնում է, որ այդ բոլորին կարել է հասնել միմիայն աղօթելով, ծովապահութեամբ և այլն...

Երբորը խօսողը և գիտութիւն ու քահանայի խօսքերը հաստատողը լինում է գիւղական վարժապետը, որը գիտէ թէ նրանք կարող են իր շահին վնասել, կամ օգուտ տալ, ուստի շատ անգամ ինքն է, որ աւելի ոյժ է տալիս նրանց պատմածներին՝ ասելով գիւղացիներին փառք ինչ քաղաքակրթված առասպելներ... մեր ոտքերի տակ գտնվող հրէշային արարածների, միաբնայ կիլոպների, կոտորաւոր վիշապների, փղի, կէս ձկան, երկրագունդը շարժող հսկայի, արեւ կուտ տուող վիշապի մասին...

Եւ ամբողջ ձմեռայն ընթացքում գիւղացիների զրբկան լցվում է այդ մեծ-մեծ առասպելներով, որը գրգռում է նրանց աւելի ջերմեւանդութեամբ աղօթելու, ամեն տեսակ նեղութիւնների համարժեքութեամբ գրեւ ծռելու և խօսքով միմիայն գոչ լինելու...

—Մեր մեղքերիցն է... կը պատասխանէ քեզ թիւրքահայ գիւղացին, եթէ դու նրա առջև պարզես նրա կրած բոլոր նեղութիւնների պատկերները...

—Թող Աստուծու կամքը լինի... կասի քահանան:

—Գնեք մեզ հասցած փորձութիւններ են, կը դիմէ գիտնողը: 1)

—Իմ շահիս չի դիպչի... վախով կը հարցնէ վարժապետը...

Շեղվում եմ. ներքի. դառնութեամբ լցված է սիրտս և մենակ չը տանջվելու համար, կամեցայ քեզ ես դառնութեամբ լցնել:

Այդպէս անուանում, ուր ժողովում են ձմեռը գիւղացիք, կան 1 օր 2 անգամ: 2): Լծնվա կոչվում է անուրի մշտնջող շինված մի արչին բարձրութեամբ տեղը, որը վրա նստում են գիւղացիք: Գիւղացիներն պարտքն է պատրաստել ամեն գիշերովայ լծնվայի տեղը, ուր հաւաքվում են ոչ միայն ծերերը, այլ և մանուկներ, որոնք առանձնացած վէջ են խաղում ընկզղով: 3). Ծերերը, որոնց հետ և գիւղացիք ու քահանան ներգրկվէ են ծխում և իրարու հրամցնում, իսկ երեխայները չը շրջապատել են գիտութիւն և եթէ երեկոյ է վարժապետին: Վարժապետը ցերեկով չէ կարող նիստին գտնվել, որովհետև նա այդ միջոցին նրստած է մի ուրիշ անուրի մէջ ծնկան վրա, չորս

1) Համարեն ամեն հայ գիւղ ունի մի գիտնող, որը փոքր ինչ գրել կարող գիտէ, մասնաւոր կարգալ սուրբ գրքերը, գրել մի քանի տող մուրհակներ. աւելի շատ գրած գրքեր և այլն պատմութիւններ: Գիւղացիք շատ անգամ խորհուրդներ են հարցնում նրանից: Հետաքրքրական են Շատախու և Կահնաթի գիտութիւնները, որոնք աւելի յիշար են լինում քան իրանցից խորհուրդ հարցնողները:

2) Տաճիկները լծնվայի տեղին կոչում են օթ ուր մագ:

3) Ուստան գաւառի քրդերը գիւղացիների այդ սովորութիւնը աչքի առջև ունենալով, մեծ քանակութեամբ ընկզղ են տանում գիւղերը և 1-ին 3 առնելով փոխում են ցորենի հետ:

կողմում չըբացրել է մանուկներին, մի մի իւրոտ և պատուոված սաղմոս կամ այլեւնարան տուել է նրանց ձեռքը, կարգանք է տալիս, իսկ ինքը կամ ծխում է, կամ ուտում, կամ դառն սուրճ խմում և կամ ձանձրութիւնը փարատելու համար մօտ գրված գաւազանով ճղճղացնում է մի անուր մանուկին... բայց առհասարակ գերադաս է համարում քնել: Մանուկները նրա քնած միջոցին սկսում են Մի ուրիշ օյիւր խաղը. հանում են իրանց տակի փուլած բարակ թաղիքները կամ ներքնակները և իրարու գլխին են խփում ու տալին ու վրա անում անուր: Եթէ աղմուկը չատացաւ, արթնանում է վարժապետը և գոռում. սակայն աշակերտները սովորած լինելով իսկոյն իրանց գրքերը մօտ են բերում վարժապետի դէմքին (շատ անգամ այնպիսի մօտ, որ նա չը կարողանայ տեսնել մանուկների ուղղվելը) մատով մի մի բառ են ցոյց տալիս և գոչում են՝

—Վարժապետ, այս ի՞նչ է, վարժապետ, այս ի՞նչ է...

Գիւղական այս ուսումնարանները երգիծական գրուածքների համար հարուստ նիւթ կարող են մատակարարել: 1): Այդ, թիւրքահայ գիւղացին իր ձմեռը համարում է իրական օրերի պէս պարապ է անցկացնում. պարապ չեն միայն կանայք և աղջիկները: Առաջինները անդադար գործում են շալ, արա իրանց ամուսինների հաղուստների համար, կտաւ չապիկներ, ուրում են թել, գործում են գուլպա, կարկանդակ են, լուսնում, յետոյ օգնում են աղջիկներին, որոնք գործում են կարգ և ունեն, շատ անգամ գորգեր, ուրում են մաղեղէն թուկեր, ձիւղից 2) մանկական խաղաղիք:

1) Գիւղերում ուսումնական չըջանք աշխատանքի և ձմեռնային վեց ամիսներն են միայն. ուսուցիչը շատ քիչ է պատահում, որ փողով է վարձատրվում. առհասարակ ցորեն է տանում վարժապետը մի և նոյն ժամանակ տիրացութիւն էլ օլիտի գիտնայ: Երբորում նահանգում միմիայն ուսուցիչները վարձատրվում են չըջանք 10—15 ոսկիով: 2) Մի տեսակ կալուղ կանայք բոյս

թէ չուղղութեան առարկաներ պատրաստելու մասին, գուցէ դրանում նրանք հմուտ են: Այսպէս է այժմ, մինչդեռ առաջ օրիորդը մնալով տանը, մանկութիւնից հէնց դառնում էր մօր օգնական թէ կարելու, թէ ձեւելու, թէ խոհանոցում և այլախօսով սովորում էր այն, ինչ որ իրան ապագայում հարկաւոր էր: Ահա ինչու այժմ շատերը ասում են չէ՛հ, ինչ է անում աղջիկը շատ կարգաւ, հերք է որ դրել կարգաւ սովորի ու գայ իր քեանքութիւնն անի:»

Գիմնադպիկ պրօգրամայի այդ պակասութիւնը լրացնելու համար Մօսկվայում երեք տարի սրահից առաջ հիմնվել է մի ընկերութիւն, որի նշանակումն է կրթված կանանց մէջ գործնական գիտելիքներ տարածել:

Ներկայ յօդուածովս կամենում եմ մի քանի տեղեկութիւններ հաղորդել այդ ընկերութեան կազմակերպութեան մասին:

Ինչպէս վերեւում ակնարկեցի «ընկերութիւնը նպատակ է դրել տարածել գործնական գիտելիքներ, որոնք հարկաւոր են ընտանեկան կեանքում և այլախօսով միջոց տալ թէ ընտանեաց մայրերին սեփական ուղիներով բաւականացնել ընտանիքի և կեանքի պահանջները և թէ կրթված կանանց սեփական աշխատանքով ապահովացնել իրանց կեանքը» (կանոնադր., յօդ. 1): Եւ այդ նշանակումն համար ընկերութիւնը իրաւունք է ձեռք բերել հիմնելու:

ա) Զեռագործի և արուեստ-արհեստագիտական ուսումնարաններ:

բ) Միջնորդական բնութիւն կրթված կանանց միջոց տալու գործադրել ձեռք բերած արհեստական, ձեռագործի և արուեստական գիտելիքներ:

գ) Մշակական ցուցահանդէս կանանց աշխատանքի արդիւնաբերութիւնը ծախելու: (յօդ. 2).

Ընկերութեան անդամ կարող են լինել երկու սեռի անձինք ամեն դասակարգի և ամեն դիրքի առանց խտրութեան, բացի ուսումնարաններում սովորողներից: (յօդ. 3).

Ընկերութեան միջոցները գոյանում են. ա) անդամակցական տուրքից. բ) դասախօսութիւններ, ներկայացումներ, կոնցերտներ, տուած եկամուտից և գ) յօժարական նուէրներից: (յօդ. 10).

Ընկերութեան գործերը վարում են հոգաբարձական խորհուրդը և անդամների ընդհանուր ժողովը (յօդ. 12).

Ընկերութեան հիմնած. ուսումնարանները կա-

րող են մանկ կանանց սեռի անձինք միջնակարգ ուսումնայն ստացած և 16 տարեկանից ոչ պակաս կարող են մտնել նաև միջնակարգ ուսումնայն ստացածները, բայց դրա համար հարկաւոր է ամեն անգամ հոգաբարձական խորհրդի առանձին տնօրէնութիւն: (յօդ. 33):

Այժմ տեսնենք թէ ինչ ուսումնարաններ է հիմնել ընկերութիւնը և թէ ինչ ուսումնարաններ մտադրել է հիմնելու:

1) Կարի և ձեռի ուսումնարան: Այդպէս սովորեցնում են ձեռի, կարի ամեն տեսակ կանանց զգեստներ, վերնաւերն, մուշտակներ: Կասեթիս-ցը տեսակ է երեք ամիս, շաբաթը երեք դաս և ամեն դասը ժամը 1—3: Վճարը 30 ռուբլի: Աշակերտուհիները պէտք է ունենան գործի համար սեփական նիւթ: Նրանք, որոնք ծանօթ չեն անգամ կարի տարրական ձեռն, կարող են մտնել պատրաստական դասատուն, վճարելով ամիսը 10 ռուբլի ամենօրեայ դասերով:

2) Մօդաների ուսումնարան (МОДА МОДЕ): Այդպիսի սովորեցնում են շէնայա, մոֆտա և այլ այգալիսի բաներ գործել. դասընթացը 24 դաս, դասը երկու ժամ: Վճարը 20 ռուբլի:

3) Զեռագործի ուսումնարան: Այդպիսի երեք բաժանումներ կայ:

Առաջին բաժանումը սովորեցնում են տարրական կար, ձողերով գործել, ձեռնակեղնի վրա նշաններ անել և այլն: Կասեթիս-ցը տեսակ է ամիս, ամիս ու կէս, վճարը 9 ռուբ. նիւթը ուսումնարանինն է:

Երկրորդ բաժանումը սովորեցնում են ձեռն երկնայաց, կանանց, տղամարդկանց ձեռնակեղն: Կասեթիս-ցը 18 դաս—դասը երկու ժամ: Վճարը 12 ռուբլի:

Երրորդ բաժանումը սովորեցնում են կարի և ձեռի վարժանքներ, ուսուցանելով նրանց մանկավարժական տեսակետից: Վճարը 6 ռուբ.:

4) Գեղարուեստական ձեռագործի ուսումնարան: Այդ ուսումնարանում սովորեցնում են նախ-չել ապակի, թաւի, ֆորմիորի վրա, արուեստական ծաղիկներ պատրաստել և այլ այգալիսի շտայլութեան առարկաներ: Ուսումնարանն ունի 6 բաժանումներ. ամեն բաժանումը դասընթացը 15 դաս—դասը երկու ժամ: Վճարը ամեն բաժանումը 15 ռուբլի:

Յիշած 4 ուսումնարանները արդէն բացված են, բայց ընկերութիւնը մտադրել է բանալու նաև հե-

տեակ երեք ուսումնարաններ:

1) Տեխնիկական նկարչութեան ուսումնարան, ուր նկարչութիւնը կը սովորեցնեն կանանց աշխատանքին յարմարեցրած:

2) Հաշուապահութեան ուսումնարան:

3) խոհարարութեան-տնտեսագիտական ուսումնարան: Վերջինը նշանաւոր է նրանով որ այստեղ բացի այն որ կը սովորեցնեն գործնականապէս կերակուր եփել, աղում, քացախում դնել, մուրաբա պատրաստել և այլն, մի և նոյն ժամանակ կը լինեն և դասախօսութիւններ ուսուցիչների զանգուածի մասին, պահպանելու մասին. կը լինեն խոհանոցը լուսաւորելու, տաքացնելու տեսակ տեսակ օժանդակի մասին զրոյցներ. կը լինեն նաև դասախօսութիւններ առողջապահութեան մասին և որ զլիսաւորն է հիւանդին օգնութիւն հասցնելու մասին մինչև բժշկի գալը: Կասեթիս-ցը կը տեւ 4-ից մինչև վեց ամիս: Վճարը 42 ռուբլի:

Իսկ ինչ որ վերաբերում է միջնորդական բնութիւն և մշտական ցուցահանդէսին,—դրանք արդէն հիմնված են և գործում են:

Մի բան որ աչքի է ընկնում այդ վճարի քանակութեան մէջ: Պէտք է խոստովանել որ վճարը համեմատաբար բարձր է նշանակած, կարծես ընկերութիւնը իրան համար նպատակ է դրել հրաւիրել հիմնած ուսումնարանները ոչ թէ աղքատներին, այլ զլիսաւորապէս ունեւորներին, որոնք մեծ մասամբ ամենին ուսուցիչներն են, որոնք նպատակ է դրել ընկերութիւնը: Մեզ իմում է, որ այդպիսով ընկերութեան հիմնադիրները կամեցել են ցոյց տալ, որ այդ մասնագիտութիւնները հարկաւոր են ոչ միայն աղքատներին, այլ նոյնպէս և ունեւորներին, նոյն իսկ հարուստներին, ի բաց առած այն, որ հարուստը այսօր հարուստ է, իսկ վաղը կարող է աղքատանալ և ստիպված լինել սեփական ոյժերով իր ապրուստը հայելայիլ, նա իմանալով մասնագիտութիւն, կարող է պարագիծ նրանով և իր ուշքը, խելքը չը դնել պարահանդէսներ, թատերներ, խնջոյքներ վրա:

Վերջացնելով յօդուածս աւելորդ չեմ համարում յայտնել, որ մի այդպիսի ընկերութիւն, մեր կեանքին յարմարեցրած, հարկաւոր է և մեզ կուրկանում, որովհետեւ մեր օրիորդական ուսումնարաններում աւարտողներ թիւը քիչ է:

Մօսկվա.

ՆՆՐԻՆ ԼՈՒՐԵՐ
Լուսն էր կիրակի, ապրիլի 22-ին, Թիւիսի հայ դերասանները պէտք է տեսնեն դերասան պ. Աւարանցի թատրոնական քանակական գործունէութեան տարեդարձը, աղնակական կալուածական բանիկ թատրոնում, կը լուսն Մօլիէրի «Տարտիֆ» պիէսան:

Մեզ խնդրում են յայտնել որ կիրակի, ամիս 22-ին, ժամը 12-ին, պատարագից յետոյ կը տարվելու է Թիւիսի կաթողիկէ Ս. Աստուծաժամին (Ս. Գեորգ) եկեղեցու ծխական ուսումնարանի հոգաբարձական ընտրութեան համար պատգամաւորների ընտրութիւնը նոյն ուսումնարանում: Այդ ընտրութեան մասին տուում ենք ներկայ համարի չորրորդ երեսի վրա եկեղեցիների բարեկարգութեան վերաբերյալ կողմից յայտարարութիւն:

Մեզ լուսն էր կիրակի, ամիս 22-ին, ժամը 12-ին, պատարագից յետոյ կը տարվելու է Թիւիսի կաթողիկէ Ս. Աստուծաժամին (Ս. Գեորգ) եկեղեցու ծխական ուսումնարանի հոգաբարձական ընտրութիւնը նոյն ուսումնարանում: Այդ ընտրութեան մասին տուում ենք ներկայ համարի չորրորդ երեսի վրա եկեղեցիների բարեկարգութեան վերաբերյալ կողմից յայտարարութիւն:

«Новое Время» լրագիրը հաղորդում է, որ կառավարութիւնը դիտարկում էր ունի պարտաւորեցնել ուսուցիչ հրապարտներին Եւրօպայում և Ամերիկայում իւրաքանչիւր տարի հաշիւ ներկայացնել կառավարութեանը իրանց չըջանի թիւ ուսուցիչ և թիւ օտար աւետարի դրութեան վերաբերմամբ: Մինչև այժմ այդ տեսակ տարեկան հաշիւներ ներկայացնելը պարտաւոր էին միայն արեւելեան երկրների ուսուցիչ հրապարտները:

ՇՈՒՇՈՒՅՑ ստացան հետեակ նամակը. «Ան երկու շաբաթ է, որ այստեղ սկսվել է անգաղապանքի տեղադր, որը, երկու կը տեւ ամբողջ միայն ամիսը: Մշուշն էլ անպակաս է. ուրեմն մինչև յունիս երեք պիտի փոխել խոսաւորեան մէջ:

ներ, կողովիներ, սակառներ, գուլպա, ձեռնոց, վիլի շաւ... կողով բաների համար թիւը ուրում և ներկում են իրանք. ուրում են ձախարակով և ներկում են դանազան բացերի արմատներով. նուրը գործերի համար ուրում թիւը առնում են քաղաքից փոխելով ձուր, ցորենի և խղի հետ:

Այնու ամենայնիւ կան գիւղեր, ուր գիւղացիք ձմեռը յատկապէս արտադրում են կեանքի պիտուրան համար բաւական կարեւոր բերքեր և բերում են ձմեռը քաղաքում ծախելու:

Երրորդի նախագում շատ քիչ կան այգալիսի գիւղեր, այնտեղի գիւղացիներից, որոնք որ բնակվում են կարմիր դաշտի շաւթի 3) շուրջը, օգտվելով այնտեղ բուսող դաշտի եղեգներից, շինում են փոխաթիւնը և մեծ քանակութեամբ բերում են քաղաք. այդ փոխաթիւնը շատ կուլիտ գործուածքներ են և երբեք չեն նմանում ոչ Վանի և ոչ Պարսկաստանի նուրը փոխաթիւնին: Կրակից բացի էրդրումցի գիւղացիներից դնելից ցիւր ընդունակ են քարտաշութեան մէջ և ձմեռը գրաւում են գեղազանգակ գերեզմանաքարեր շինելով գերեզմանաքարեր, որոնցից ամենահասարակը գնահատվում է 1—1½ ոսկի 4):

Քարեր կտրում են քարահանքից, լաւ տաշում են, յետոյ գնալան խաչեր և գմբէթներ քանդակում վրան ու իրանց ձեռնան սալերով կամ սահալներով քաղաք են բերում գերեզմանատուն, ուր որ է այդ քարերի ծախելու կենտրոնը:

Բացի այդ երկու ձեռնային արհեստներից, էրդրումի գիւղացիք կամ պարապ են, կամ ձուր որսալով յունիսլային (Միսիսիան օրը) քաղաք են բերում և կամ ամառվայ և աշունայայ պատրաստած աթաւը բառնալով սալերի վրա, քաղաքի

է, որին կարելի է ձուր և օղովել, բուսում է եղեգների չըջակցում և ամեն ճահճային տեղերում:

3) Երրորդի դաշտի միջից անցնելով Եւրօպայից (տեղացիք Սե ջուր են կոչում) կաղձ մում է մեծ ճահճ, մասնաւոր գործան, որ յորդկելով մի մեծ լիճ է գոյացնում. այդ ճահճի մէջ բուսում է ձիւ և եղեգն, որը և կուլվում է շաւթ կամ սաղ:

4) Այժմ տաճկական ոսկին արժէ 8,40 կամ 8, 45 Կ:

հրապարակները լցնում են:

Վասպուրականում աւելի շատ են ձմեռային արդիւնաբերութիւններ:

Սիւկա և Սիւկն եր գիւղերում գործում են մեծ քանակութեամբ յատակի փուռածի համար ձիւրից փոխաթիւնը, բաւական կուլիլ և նուրը. ձիւր հաւաքում են Գէշիլի գէօլի չըջակցներից: Հայոց ձուրը իշխան իւգոս, Անգը, խաւա-կանց և խոնրի ու գիւղերի մէջ պատրաստում են կտուրները ծածկոցի համար փոխաթիւնը, ձիւր և եղեգն բերում են Մարդալ գետակի եղեգներից:

Ամբողջ Վասպուրականի և իր շըջակց դաւառների այդ երկու տեսակ խոնրները (փոխաթիւնը) պատրաստում են վերջինից գիւղացիք: Միայն քաղաքի Արարուց կիրակիօրեայ տնակաճառում, ամբողջ ձմեռը ծախվում է շուրջ 10,000 մեծ և փոքր յատակի խալիներ և 4—5,000 կտուրի:

Հայոց ձուրը Հիւստան և Առեղ գիւղերը գործում են կողմից, ուլա 1), մաղրակա 2), կշուք և այլն խոնրի գետակի եղեգներում բուսող ունեւորների դաշտ, ձիւրից: Օրը միայն 15—20 երկ բերում են քաղաք:

Ձգրաւէն, Մարմէտ, Կուրուբաշ գիւղերը արտադրում են ջրամաններ, կարաններ, տիւճիկներ և այլն ամեն տեսակ հողի ամաններ, կեռածներ 3), որոնցից մասնաւորաբար են ամբողջ նախագին: Կուրուբաշ գիւղում ձմեռը կիւր և պատրաստում են նոյնպէս և իրանց մօտ գտնվող քարահանքից մեծամեծ քարեր կտրելով դի-

1) Ափսոսանքն գործուածք, հայ գնելու համար: 2) Այն գործիքն է, որի վրա փոխվում հացի խըմբը, նրանով կպցնում են թնդի կողմին: 3) Մըշոյ մէջ արտադրում են մի տեսակ հողից կեռածներ, որ երբ տաքանում է, սկսում է ցոյց տալ իր վրայի ոսկեւած բծերը. կարծես ոսկու փոշի է ցանկած այդ ամանը կազմող կարմիր կաւի մէջ. շատ դիմացկուն ամաններ են: Ոսկու մանր հատիկները կրում են իրանց թէ ներքին և թէ արտաքին երեսներ վրա: Վասպուրականի ամանների մէջ նշանաւոր են աւազակաւուն կաւով շինված ամանները, որոնք ջուրը միշտ սառն են պահում և մի տեսակ ֆիւլար են, մաքրում են ջրի անմաքրութիւնը:

զում և պահում են, որ գարնան քաղաք բերեն:

Արտամէտցիք շինում են աթոռներ, լուսամուտները պատրաստ ինդիկեր: Աթոռները նըմանում են ձեռ տաբուրետի և երկու. նըմանելու տեղը գործում են ձիւրից կամ գոյնզոյն տարեկան կողմից ցորենի հասկերից, շատ քիչ անգամ շինում են յինարանով թէ և կուլիտ, բայց զմանցկուն աթոռներ 1): Արտամէտցիք շուրջ 2000 աթոռներ են բերում քաղաք ամբողջ ձմեռվայ ընթացքում. բացի դրանց նրանք շինում են կտաւադրութեան գործիքներ—սանդղեր և ուրիշ բաներ. քաղաքում այդ տեսակ գործիք շինողներ երեք հատ կան. սրանց հետ միացած, Արտամէտցիք կարողանում են գոհացնել Վանի մէջ գտնվող 700 խորերին և ամեն գիւղում երկու երեք հատ գտնվող կտաւադրութիւններ:

Կտաւ, շիւթ, կապոյտ կտաւ, գորգ, կարպետ և այլն գիւղացի կանանց ձմեռային արտադրութիւններն են: Միայն քաղաքը մանում է ծախվելու 500 հատ հայի ձեռքի դործ կարպետներ և մեծ քանակութեամբ. շատ զմանցկուն, շատ կուլիտ, բայց շատ էլ է փոքր: Բուրդը ձեռք են բերում իրանց ոչխարներից:

Կենդանանց և Բերդալ գիւղերը արտադրում են ձեռք և երկանք—աղաւու քարեր, թուղի խուրի, սանդղեր և այլն. ամբողջ նախագի ջրաղացների, աների քարերը և այլն առնվում են գրանցից: Իսկ Հայոց-ձուրը Երէմէր գիւղի ճարտար քարտաշները շինում են ջրաղացի քար և այլն և երկու. այդ այն փայտայ փորուածքն է, որի միջից ջուրը վիթում է դէպի ջրաղացի անիւններ. փայտի փոխաթիւն էրէմէր քարտաշները կտուր-կտուր քարերը փորում, ամենայն ճարտարութեամբ հաղցնում են իրարու և պատրաստում են այդ առաջին նաւերը:

Ալիքակի գիւղացիք, մասամբ և ծեսանցիք, բերդակցիք, ամբողջը և այլ միւսները ունեն ձիւթահանքի, որտեղ նրանք ձեռք հանում են մեծ

1) Աթոռները շատ է փոքր գին ունեն, հատը ծախվում է 60 փարայի (15 Կ):

քանակութեամբ ուսուցիչ և վառելու լաւ ձէթեր կտաւաւը ցանում են իրանք:

Աղուէնի, գալի, խոլի և այլ մորթիների արդիւնաբերութեամբ դրաւում են առհասարակ բոլոր այն գիւղացիք, որոնք գտնվում են Հայոց ձուրում, բայց աւելի շատ արտադրում են Ձառնակ գիւղի բնակիչները, որոնք մեծ մասամբ թուրքեր են: Մի ձեռնվայ ընթացքում շուրջ 5—6000 դանազան մորթիք են մտնում Վան և Վանից էլ գնում այլ քաղաքներ:

Ձմեռային դրաւումները քաղաքում են կան. նրանք որոնք խաւով ունեն, արդէն նստում են իսկ որոնք գիւղերի հետ գործ ունեն, նստում ամբողջ ձմեռվայ ընթացքում կարում են սալ լա (բաճկոն), դպուս (արխաւու) և այլն գնալան այլ հագուստներ, որպէս զի գարնան տանն գիւղացի կամ քիւրդերի մէջ: Առաջին նամակներից մէկում այդ մասին կարծես արդէն խօսել են:

Օտարազգիները, այսինքն քիւրդեր և թիւրքերը, մեծ մասամբ պարապ են անցկացնում ինչպէս ամառվայ մեծ մասը, նոյնպէս և ամբողջ ձմեռը. նրանք ուսում են հայի աշխատանքը. միայն քիւրդերի կանայքն են, որոնք գործում են կարպետներ, գորգեր, տիֆտիկեայ վիլ շալեր, ձեռնոցներ, մազէ սոպրակներ, շուռաներ և այլն: Գնչուները (միբըր) դրաւում են մաղադրութիւններ և խողանակ շինելով, նոյնպէս և որոտը դուրկեամբ, նուազածութեամբ և այլն:

Երրորդի վիլայէթում կան հայ գնչուներ (բօշա), որոնք մասին կը գրեմ քիւր, երբ կարողաւ նամ համողի պատեղ գնալով մի ուսուցչի, որ թոյլ տայ ինձ օգտվելու իր այն հաւաքածոնից որի մէջ նա ունի փողոված շուրջ 2000: հայ բոշայական բառեր: Բոշաներից Երրորդում բնակվում են Սանասարեան ուսումնարանի կողմը գտնվող մի առանձին թաղի մէջ, որը կուլվում է բօշա մահէ:

Երրորդ անգամ կաշխատեմ քիւր մի քանի տեղի կուլիւններ գրել թրքահայոց իրաւաբանական սովորութիւնների մասին:

